ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՎԵՏԱՐԱՆՉՈՒԹՅԱՆ ԺԱ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ ԲՐԱԶԻԼԻԱՅԻ ՍԱԼՎԱԴՈՐ ՔԱՂԱՔՈՒՄ

(24 նոյեմբեր–3 դեկտեմբեր 1996)

Ցուրաքանչյուր յոթ-ութ տարին մեկ անգամ, ԵՀԽ-ի ընդհանուր համագումարից առաջ, անդամ եկեղեցիների պատգամավորները և այլ հարանվանությունների ներկայացուցիչներն ի մի են հավաքվում՝ քննարկելու առաքելության և ավետարանչության հետ կապված հարցերը, ներդաշնակելու իրենց ուժերը Ավետարանի տիեզերական քարոզչության գործում: Ըստ այդմ, Սալվադորի համաժողովը թվով տասնմեկերորդն էր՝ 1910 թվականի Էդինբուրգի Ա միսսիոներական կոնգրեսից սկսյալ:

Նախորդ համաժողովից հետո, որը տեղի ունեցավ ԱՄՆ-ի Սան-Անտոնիո քաղաքում 1989-ին, աշխարհն ականատես եղավ արմատական փոփոխությունների ու տեղաշարժերի: Խորհրդային Միության քայքայումով և «երկաթե վարագույրի» խորտակմամբ աշխարհն իրեն գտավ մի նոր իրադրության առջև: Թվում էր, թե «խորհրդային սպառնալիքի» վերացումով չարիքը պետք է վերանար և պիտի սկսվեր համաշխարհային խաղաղության, բարգավաճման ու ներդաշնակության դարաշրջանը: Սակայն համաշխարհային հասարակությունը շուտով ցնցվեց ազգամիջյան պատերազմների թոհուբոհից, որոնք բռնկվեցին Արևելյան Եվրոպայի երկրներում: Արյունահեղություններն ուղեկցվեցին տնտեսական սուր նգնաժամով: Տասնյակ հազարավոր մարդիկ հասան ծայրագույն աղքատության: Դրությունը շարունակեց մնալ լարված Աֆրիկայի, Ասիայի և Մերձավոր Արևելքի շատ երկրներում:

Ցնցումներից անմասն չմնացին նաև քրիստոնյա եկեղեցիները: Արևելյան Եվրոպայի պատմական ուղղափառ եկեղեցիները ֆիզիկապես անպատրաստ գտնվեցին նոր իրադրության առջև՝ չկարողանալով իրենց հոտին ապահովել անհրաժեշտ հոգևոր սնունդով: Օգտվելով առիթից, հազարավոր քարոզիչներ հեղեղեցին Արևելյան Եվրոպան՝ իրենց քարոզության համար պարարտ հող գտնելով այնտեղ: Սկսվեց մարդորսության մրցավազք, որն ուղեկցվեց փոխադարձ մեղադրանքներով ու այլամերժությամբ:

Մյուս կողմից, «երրորդ աշխարհի» երկրներում տարիների խուլ բողոքը, օտար միսսիոներների կողմից բնիկ մշակույթների հանդեպ եղած արհամարհանքի դեմ, գնալով ավելի վճռական ու սիստեմատիկ բնույթ ստացավ: Էթնիկ գիտակցության ամրապնդման պայմաններում բնիկ ժողովուրդները սկսեցին ընդվզել իրենց պարտադրված ծիսական ու գաղափարական արտահայտչաձևերի դեմ:

Բոլոր այս իրողությունների գնահատման պայմաններում համաժողովը նշանաբան էր ընտրել՝ «Կոչված մեկ հույսի. Ավետարանը տարբեր մշակույթների մեջ»:

Ներկա էին ավելի քան 400 ներկայացուցիչներ աշխարհի գրեթե բոլոր երկրներից: Համաժողովն իր աշխատանքները սկսեց լիագումար նիստերով, որտեղ ներկայացվեցին քննարկման հիմնական ուղղությունները: Ապա համաժողովը բաժանվեց աշխատանքային չորս խմբերի, որոնց խորագրերն էին՝ ա) Ավետարանական վկայություն յուրաքանչյուր մշակույթի մեջ, բ) Ավետարանն ու ինքնությունը համայնքի մեջ, գ) Տեղական համայնքները բազմադավան հասարակություններում, և դ) Մեկ Ավետարան, տարբեր արտահայտություններ:

Յուրաքանչյուր խումբ իր հերթին բաժանվեց ենթախմբերի, որտեղ տեղի ունեցան աշխույժ քննարկումներ հրատապ հարցերի շուրջ: Ենթախմբերի պատրաստած բանաձևերը ներկայացվեցին խմբերի լիագումար նիստերին, իսկ խմբերի հաստատած փաստաթղթերը քննարկումներից հետո վավերացվեցին համաժողովի լիագումար նիստերում, որոնք աստվածաբանական հաստատումներ լինելու հավակնությունը չունեն, այլ սոսկ եկեղեցիներին ուղղված հրավերներ են՝ ԻԱ դարի շեմին իրենց առաքելության մեջ: Համաժողովը հրապարակեց նաև կոչ՝ ուղղված ամենքին:

Մասնակիցները միահամուռ կերպով պաշտպանեցին Ավետարանի մշակութայնացման գաղափարը՝ դատապարտելով մշակույթների հանդեպ գերակայության դրսևորումներն ու մարդորսության փորձերը:

Համաժողովի աշխատանքներին զուգահեռ տեղի ունեցան հանդիպումներ բնիկ ժողովուրդների, կանանց և երիտասարդության, ինչպես նաև տարբեր եկեղեցիների ու մշակույթների ներկայացուցիչների հետ: Համաժողովի ծրագրի մեջ տեղ էին գտել նաև Աստվածաշնչական ուսումնասիրությունները ու միասնական պաշտամունքի արարողությունները: Առանձնապես հուզիչ և տպավորիչ էր ապաշխարության արարողությունը Սալվադորի հին նավահանգստում, որտեղ 400 տարի շարունակ վաճառքի էին հանվում Աֆրիկայից բերված ստրուկները:

Սույն համաժողովին, հանուն Հայ Առաքելական Եկեղեցու, մասնակցեցին Տ. Տաքև արք. Ղարիբյանը, Տ. Վիգեն եպս. Այբագյանը, Տ. Նարեկ ծ. վրդ. Ալեմեզյանը (Կիլիկյան Աթոռի ներկայացուցիչ) և Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը:

ՄԻՔԱՅԵԼ Ծ. ՎՐԴ. ԱՋԱՊԱՀՅԱՆ